ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM
SHARE

*Համարը* N 79
*Տիպը* Որոշում
*Սկզբնաղբյուրը* ՀՀՊՏ 2002.02.14/7(182) Հոդ.107
*Ընդունող մարմինը* ՀՀ կառավարություն
*Ստորագրող մարմինը* ՀՀ վարչապետ
*Վավերացնող մարմինը* ՀՀ Նախագահ
*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* 30.01.2002
*Տեսակը* Հիմնական
*Կարգավիճակը* Գործում է
*Ընդունման վայրը* Երևան
*Ընդունման ամսաթիվը* 30.01.2002
*Ստորագրման ամսաթիվը* 30.01.2002
*Վավերացման ամսաթիվը* 30.01.2002
*Ուժը կորցնելու ամսաթիվը*

# ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՐԿԱՐԱՏԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆՈՐՈԳՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՊԱՌՈՂԻՆ ԱՆՀԱՏՈՒՑՑ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՆՄԱՆՕՐԻՆԱԿ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*«Վավերացնում եմ»*
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
*30 հունվարի 2002 թ.*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունվարի 2002 թվականի N 79
քաղ. Երևան

## ԵՐԿԱՐԱՏԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆՈՐՈԳՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՊԱՌՈՂԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՆՄԱՆՕՐԻՆԱԿ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել երկարատև օգտագործման ապրանքների նորոգման ընթացքում սպառողին անհատույց տրամադրման ոչ ենթակա նմանօրինակ ապրանքների անվանացանկը (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2002 թվականի հունվարի 30-ից:

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետ** **Ա. Մարգարյան**

*Հաստատված է*
*ՀՀ կառավարության 2002 թ.*
*հունվարի 30-ի N 79 որոշմամբ*

## Ա Ն Վ Ա Ն Ա Ց Ա Ն Կ

## ԵՐԿԱՐԱՏԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆՈՐՈԳՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՊԱՌՈՂԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՆՄԱՆՕՐԻՆԱԿ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

Ավտոմեքենաներ և մոտոհեծանվային ապրանքներ, կցորդներ ու դրանց համարակիր ագրեգատներ՝ բացի հաշմանդամների օգտագործման համար նախատեսված ապրանքներից, զբոսանավերից և լողամիջոցներից

Կահույք

Կենցաղային էլեկտրական սարքեր, արդուզարդի (տուալետի) և բժշկական նպատակներով օգտագործվող առարկաներ (էլեկտրասափրիչ, էլեկտրամազահարդար, էլեկտրաունելի՝ մազերի գանգրացման համար, բժշկական էլեկտրառեֆլեկտոր, էլեկտրաայրիչներ, էլեկտրաբինտեր, էլեկտրածածկոցաշալ, էլեկտրածածկոց)

Մթերքների ջերմային մշակման և կերակրի պատրաստման էլեկտրակենցաղային սարքեր (կենցաղային վառարաններ «ՀԹՃ», էլեկտրավառարաններ, խոնավաջերմամշակման սարքեր (տոստերներ), էլեկտրատաքացուցիչներ, էլեկտրաթեյնիկներ և այլն)

Քաղաքացիական զենք, քաղաքացիական և ծառայողական հրազենի հիմնական մասեր